*09-ը սեպտեմբերի 2025թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.05.2025Թ. N 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 53*

*/Զեկուցող՝ Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ/*

***N 111 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է.**

1. Աշտարակ համայնքի ավագանու 08.05.2025թ. N 65-Ա որոշման 1-ին կետը ընդունել նոր խմբագրությամբ.

«1. Հաստատել Աշտարակ համայնքի Արուճ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 02-022-0028-0010 ծածկագրով 0,0829հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, կապի հողեր գործառնական նշանակության փոփոխությունը:»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 17*  *ԴԵՄ- 0*  *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | |

*Ս. Օվոյանը և Ն. Անդրեասյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*09-ը սեպտեմբերի 2025թ.*

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 53*

*/Զեկուցող՝ Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ/*

**N 112 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Հիմք ընդունելով Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի առանձին հատվածների նպատակային նշանակությունների փոփոխությունների և բնակավայրի տարածքի գոտևորման նախագծի մշակման անհրաժեշտությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական փաստաթղթերում ներառված Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի առանձին հատվածների նպատակային նշանակությունների փոփոխությունների և բնակավայրի տարածքի գոտևորման նախագծի մշակման նախագծման առաջադրանքի նախագիծը՝ համաձայն հավելվածի:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 18* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ | ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇԱՎԱՐՇՅԱՆ |

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

*Հավելված 1*

*ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ*

*համայնքի ավագանու 2025 թվականի*

*սեպտեմբերի 9-ի N 112-Ա որոշման*

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

## /ՆԱԽԱԳԻԾ/

**ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական փաստաթղթերում ներառված Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի առանձին հատվածների նպատակային նշանակությունների փոփոխությունների և բնակավայրի տարածքի գոտևորման նախագծի մշակում**

**1. Բնակավայրի հիմնական բնութագիրը**

| | | |
|---|---|---|
| բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը՝ | 4233.80 | հա |
| բնակչության թիվը՝ | 29768 | մարդ |
| 0-ից մինչև 6 տարեկան երեխաներ | **1557** | մարդ |
| 7-ից մինչև 17 տարեկան դպրոցահասակներ | 3771 | մարդ |
| աշխատունակ հասակի բնակչություն | 19749 | մարդ |
| թոշակառուներ | **4691** | մարդ |
| հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում՝ | **4233.80** | հա |
| *բնակավայրի հողեր ընդհանուր, որից՝* | 1186.32 | հա |
| բնակելի կառուցապատում (տնամերձ) | 645.78 | հա |
| հասարակական կառուցապատում | 201.45 | հա |
| խառը կառուցապատում | 1.55 | հա |
| ընդհանուր օգտագործման | 203.80 | հա |
| այլ հողեր | 133.74 | հա |
| *գյուղատնտեսական նշանակության հողեր ընդհանուր, որից՝* | **2717.01** | հա |
| վարելահող | 854.27 | հա |
| խոտհարք | 0 | հա |
| արոտ | 945.96 | հա |
| այլ հողեր | 329.07 | հա |
| *արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր ընդհանուր, որից ՝* | **125.17** | հա |
| արդյունաբերության | 87.88 | հա |
| գյուղ. արտադրական | 15.94 | հա |
| պահեստարանների | 5.55 | հա |
| *էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր ընդհանուր, որից՝* | **61.12** | հա |
| էներգետիկայի | 1.44 | հա |
| կապի | 0.32 | հա |
| տրանսպորտի | 53.14 | հա |
| կոմունալ | 6.22 | հա |
| *հատուկ պահպանվող տարածքներ ընդհանուր, որից՝* | **48.01** | հա |

| | | |
|---|---|---|
| պատմական և մշակութային հողեր | 41.76 | հա |
| *ջրային հողեր ընդհանուր, որից՝* | 17.05 | հա |
| գետեր | 9.71 | հա |
| լճեր | 2.48 | հա |
| ջրանցքներ | 4.82 | հա |
| հիդրոտեխ. և ջրատեխ. այլ | 0 | հա |
| ջրամբարներ | 0.04 | հա |
| հատուկ նշանակության հողեր | 70.41 | հա |
| Անտառային հողեր *ընդհանուր* | 8.71 | հա |
| անտառ | 8.71 | |
| թփուտ | 0 | |
| պահուստային հողեր | 0 | հա |
| *Հողային ֆոնդի ցուցանիշները բերված են առ 2025թ. հաստատված հողային հաշվեկշռով և ենթակա են ճշտման օրենսդրությամբ սահմանված կարգով: | | |

| | | |
|---|---|---|
| **Տարածքներն, ըստ սեփականության ձևերի** | | |
| ՀՀ քաղաքացիների սեփականություն | 2722.10 | հա |
| իրավաբանական անձանց սեփականություն | 124.52 | հա |
| համայնքային սեփականություն | 1098.78 | հա |
| պետական սեփականություն | 288.40 | հա |

*Լրացվում են ընթացիկ պարվա տվյալները:*

**2. Ռեսուրսների հիմնական տեսակները, արտադրության գերիշխող ճյուղերը, ինժեներատրանսպորտային ապահովվածությունը**

Զբոսաշրջությունը, գյուղատնտեսություն, գյուղարտադրական տնտեսություններ, փոքր և միջին ձեռնարկություններ:

**3. Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները.**

- համայնքի զարգացման ծրագրից բխող՝ սոցիալական, մշակութային, արդյունաբերական, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը ներկայացվող հիմնական պահանջները:
- Նախագծային լուծումները նպատակաուղղել համայնքների զարգացմանը, դրանցում առկա ներուժի օգտագործմանն ու ուժեղացմանը, տարածքների համաչափ զարգացման ապահովմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով թույլ զարգացած տարածքներում ներդրումների համար նպաստավոր ոլորտների բացահայտմանը և համապատասխան գոտիների ընտրությանը:
- Տարածքային զարգացման քաղաքականության բարելավման, պլանավորման ու իրականացման գործընթացներում ապահովել տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցությունը:

**4. Նախագծման հիմքը.**

- Աշտարակ համայնքի բնակավայրի զարգացման ծրագիր (հայեցակարգ)
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համակարգմամբ մշակված միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի կազմում մշակված Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագիծը և գոտևորման նախագիծը,
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշում, ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N625-Ն որոշում, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշում, ՀՀ կառավարության 2004

թվականի դեկտեմբերի 30-ի N 1929-Ն որոշում, ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում, ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» և ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» շինարարական նորմերի պահանջներին

**5. Համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները,**

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. թիվ N 194-Ն որոշմամբ հաստատված համայնքի զարգացման ծրագիր:

**6. Քաղաքաշինական (այդ թվում՝ հատուկ կարգավորման օբյեկտների), գյուղատնտեսական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին, ինչպես նաև բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին վերաբերող հիմնական պահանջները.**

Ապահովել ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով նախատեսված սահմանափակումները, մասնավորապես՝

- նշել սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ դրանց առակյության դեպքում

- նախագծային լուծումներն ուղղել գյուղատնտեսական արժեքավոր հողերի, բնության, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանմանը, գործառնական գոտևորման գծագրում առանձնացնել պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիները, (անհրաժեշտության դեպքում նաև կառուցապատման կարգավորման և լանդշաֆտի պահպանման գոտիները), սահմանել դրանց օգտագործման պայմանակարգերն, (պատմամշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենք, հոդված 16):

- բնակչության համար անվտանգ և կառուցապատման համար բարենպաստ տարածքների ընտրությունը, ապահովելով ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 9-ի N 138-Ն և 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշումներով սահմանված պահանջները:

- առանձնացնել ճանապարհների, ինժեներական ենթակառուցվածքի, արդյունաբերական օբյեկտների, հանքավայրերի և այլ օբյեկտների ՀՀ օրենսդրությամբ սահմանված սանիտարական, պաշտպանական, պահպանական, անվտանգության գոտիները, ինչպես նաև քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքները և դրանցում քաղաքաշինական գործունեությանը ներկայացվող լրացուցիչ պայմանները:

- Բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանությանն ուղղված միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել 1998 թվականի դեկտեմբերի 2-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՕ-265 օրենքի 4-րդ և 7-րդ հոդվածների ու 2002 թվականի մարտի 5-ի «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՕ-309 օրենքի 7-րդ հոդվածի բ), գ), ը) և 8-րդ հոդվածի գ) կետերի դրույթների համաձայն:

**7. Տեղեկատվություն համայնքում առկա ելակետային տվյալների վերաբերյալ (առկայության դեպքում).**

նախկինում հաստատված քաղաքաշինական ծրագրային և հողաշինական փաստաթղթեր, տարածքի տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզագրման նյութերն ու անշարժ գույքի կադաստրի այլ տվյալները (այդ թվում՝ փաստացի հողօգտագործումների և սեփականության սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն), սահմանված կարգով հաստատված սեյսմիկ շրջանացման և միկրոշրջանացման քարտեզներ, ինժեներաերկրաբանական շրջանացման (պայմանների) քարտեզ, ինչպես նաև երկրաբանական պայմանների վերաբերյալ այլ տեղեկատվությունը, այդ թվում՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ից,

ՀՀ Արագածոտնի մարզպետի 20.06.2022 թվականի N 228-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման

փաստաթուղթը և ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 29.01.2013 թվականի թիվ 9-Ն որոշմամբ հաստատված Աշտարակ համայնքի տարածական պլանավորման փաստաթուղթը:

**8. Համայնքի զարգացման առանձնահատկություններից բխող այլ լրացուցիչ պահանջներ.**

Նախատեսել նաև՝ համայնքի կողմից առաջարկվող առանձին հաղամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություն քաղաքի հետագա հեռանկարային զարգացումն համաչափ ձևով ապահովելու և քաղաքի կենտրոնը բեռնաթափելու նպատակով:

**9.Համայնքի գոտևորման նախագծին և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային ներկայացվող պահանջները.**

Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի առանձին հատվածների փոփոխությունների և բնակավայրի տարածքի գոտևորման նախագծի շրջանակում ապահովել ՀՀ կառավարության 29.12.2011թ. N1920-Ն, 02.05.2003թ. N625-Ն որոշումներով սահմանված պահանջները:

**10. Նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները**

- Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի առանձին հատվածների փոփոխությունների և բնակավայրի տարածքի գոտևորման նախագծի կազմը և բովանդակությունը մշակել ՀՀ կառավարության 29.12.2011թ. N1920-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով՝ միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի կազմում մշակված Աշտարակ համայնքի նախագծով սահմանված դրույթները:

**11. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ բնակավայրի քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնների մշակում**

Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի առանձին հատվածների փոփոխությունների և բնակավայրի տարածքի գոտևորման նախագծի շրջանակում հաշվի առնել կից ներկայացվող կանոնադրությամբ սահմանված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

**11.1 ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՏԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ**

(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

«Աշտարակ քաղաքի քաղաքաշինական ավանդույթները» բաժնում նշվում է Աշտարակ քաղաքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործման շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը՝ հիմնավորված համապատասխան լուսանկարներով, գծագրերով (եթե առկա են):

**11.2 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ**

«Աշտարակ քաղաքի առկա պատմամշակութային հուշարձանները» բաժնում նշվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով հիմնավորված՝ համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների, դրանց ներկա վիճակի նկարագիրը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:

**11.3 ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

«Պահպանման ենթակա շենքեր, շինություններ» բաժնում նշվում են՝ բնակավայրի տարածքում գտնվող պատմամշակութային արժեք ներկայացնող շենքերի և շինությունները, դրանց ներկա վիճակի նկարագրությունը, վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

## 11.4 ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՏԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Աշտարակ բնակավայրի տարածքում խրախուսվող ճարտարապետական ոճը և շինարարական տեխնոլոգիաները» բաժնում թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները (եթե դա որոշիչ առանձնահատկություն է համարվել), շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

## 11.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Աշտարակ բնակավայրի տարածքում «կառուցապատման կանոնները» բաժինը մշակվում է գրաֆիկական տեսքով՝ յուրաքանչյուր գծագիրը կամ սխեման ուղեկցող տեքստային բացատրական մասով:

Կառուցապատման սխեմաները մշակվում են բնակավայրի հատակագծային կառուցվածքի կարևոր հատվածների՝ խաչմերուկների, հրապարակների, հասարակական կենտրոնների, մայրուղային փողոցներին հարող թաղամասերի համար: Բնակավայրի գոտևորման նախագծի հիմքի վրա կետագիծ սահմանագծերով նշվում են կառուցապատման սխեմաներով ներկայացված հատվածները, համապատասխան համարակալմամբ: Յուրաքանչյուր առանձին հատվածի կառուցապատման սխեման ներկայացվում է առանձին բաժնով:

Կառուցապատման սխեմաներում նշվում են՝

1) հատվածի պայմանական սահմանագիծը, փողոցները, մայթերը, կարմիր գծերը, կառուցապատման գծերը (եթե վերջիններս տարբերվում է կարմիր գծերից), ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների սահմանները,

2) գոյություն ունեցող շենքերի կառուցապատման ուրվագծերը, նախատեսվող շենքերի համար կառուցապատման գոտին, կառուցապատման գոտու տարբերակումը ըստ թույլատրելի բարձրությունների (եթե անհրաժեշտ է), հիմնական և օժանդակ շենքերի և շինությունների տեղադրման նկատմամբ պահանջները, գոյություն ունեցող ծառերը, փոքր ճարտարապետական ձևերը և այլ քաղաքաշինական տարրեր,

3) ավտոկայանատեղերի կազմակերպման տարբերակները, թաղամաս մտնող ավտոմոբիլային և հետիոտն ճանապարհների և անցումների լուծումները, հեծանվաուղիների կազմակերպման կանոնները,

4) քանդման կամ ապամոնտաժման ենթակա օբյեկտները (առկայության դեպքում), բակային տարածքների հատակագծման տարբերակները՝ նշելով մանկական խաղահրապարակները, մարզադաշտերը տնտեսական հարթակները և այլ տարրեր,

5) շենքերի և շինությունների արտաքին աստիճանների, մուտքերի, շքամուտքերի, կազմակերպման կանոնները,

6) պարիսպների և ցանկապատերի առավելագույն բարձրության սահմանափակումները, տեսքին և նյութին ներկայացվող պահանջները, տեղադրման կանոնները,

7) շենքերի ճակատներին, բացվածքներին, տանիքներին, տանիքներից ջրահեռացման համակարգին ներկայացվող պահանջներ, գովազդային վահանակների և էկրանների տեղադրմանը ներկայացվող պահանջները և սահմանափակումները,

8) բնակչության բոլոր խմբերի համար մատչելիության ապահովման պայմանները և առաջարկվող լուծումները,

9) ինժեներական ենթակառուցվածքներով ապահովվածության, գոյություն ունեցող ծառերի, հողի բերրի շերտի բնակվող կենդանիների պահպանման վերաբերյալ պահանջներ,

10) կիրառելի ծառատեսակները (ըստ անհրաժեշտության), կանաչապատման կանոնները:

[61]*Առաջարկվում է նախագիծը մշակել հետևյալ կազմով.

- ՀՀ կառավարության 29.12.2011թ N1920-Ն որոշմամբ պահանջվող կազմով և բովանդակությամբ (պահանջներն ըստ որոշման նոր խմբագրության)

Թույլատրվող համակարգչային ծրագրերի ձևաչափեր՝ Dwg կամ Dxf կամ Shape:

ի լրումն օրենսդրությամբ սահմանված նախագծի կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներ (առկայության դեպքում)

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի առանձին հատվածների նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների տեղաբաշխման ուրվագիծ

(հողամասերի տեղադիրքը-գործող նպատակային և գործառնական նշանակությունը-մակերեսը-նոր նպատակային և գործառնական նշանակությունը)

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*09-ը սեպտեմբերի 2025թ.*

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ, ՈՒՋԱՆ ԵՎ ՓԱՐՊԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 53*

*/Զեկուցող՝ Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ/*

***N 113 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 26.06.2025թ. N 2/փ-210, 08.08.2025թ. N 2/փ-243 և N 2/փ-248, 20.08.2025թ. N 2/փ-263, N 2/փ-267 և N 2/փ-268 դրական եզրակացությունները՝ Աշտարակ քաղաքում, Ուջան և Փարպի բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 02-001-0001-0049 ծածկագրով 0.10136հա բնակելի կառուցապատման և 02-001-0021-0001 ծածկագրից 0.2225հա բնակավայրերի այլ հողամասերի նպատակային նշանակությունը որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության բազմամյա տնկարկ հողատեսքի /խաղող/ փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության 02-001-0736-0007 ծածկագրից 0.03309հա հանգստի համար նախատեսված հողամասի, 02-001-0312-0046 ծածկագրից 0.02042հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամասի և 02-001-0312-0039 ծածկագրից 0.05853հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նպատակային նշանակությունը որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի փոփոխությունը:

3. Հաստատել Աշտարակ համայնքի Ուջան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-109-0223-0108 ծածկագրով 0,0945հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի

նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

4. Հաստատել Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-110-0171-0038 ծածկագրով 0,4418հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

5. Հաստատել Աշտարակ համայնքի Փարպի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-110-0171-0037 ծածկագրով 0,4815հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

6. Հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-001-0694-0063 ծածկագրով 0,174հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

7. Բոլոր կետերում նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել Աշտարակ համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում, Աշտարակ քաղաքի, Ոսկեվազ և Փարպի բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 18* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*09-ը սեպտեմբերի 2025թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 53*

*/Զեկուցող՝ Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ/*

**Ն 114 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Հիմք ընդունելով Գևորգ Ավոյանի 27.08.2025թ. N 11103 և Վլադիկ Սուքիասյանի 29.08.2025թ. N 11257 դիմումները, համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 48¹ հոդվածների, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Թույլատրել Աշտարակ քաղաքի Ա. Մանուկյան փողոց N 21/1 հասցեում գտնվող առևտրի և սպասարկման օբյեկտին կից, 02-001-0105-0290 ծածկագրով 4,5քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը օբյեկտին լրացուցիչ մուտք ապահովելու նպատակով, կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ օբյեկտի բաժնային սեփականատերեր Աիդա Սեդրակի Ավոյանին, Հռիփսիմե, Հերմինե և Գևորգ Մամիկոնի Ավոյաններին տրամադրելու 50 /հիսուն/ տարի ժամկետով՝ տարեկան 9000 /ինը հազար/ ՀՀ դրամ վճարով:

2. Թույլատրել Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հրապարակ N 5/1 հասցեում գտնվող, 02-001-0167-0078 ծածկագրով 10քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը վարձակալության իրավունքով /առանց մրցույթի/ Վլադիկ Արմենի Սուքիասյանին տրամադրելու 1 /մեկ/ տարի ժամկետով՝ տարեկան 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ վարձավճարով:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 18* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇԱՎԱՐՇՅԱՆ

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*09-ը սեպտեմբերի 2025թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՄՐՑՈՒՅԹ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 53*

*/Զեկուցող՝ Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ/*

**N 115 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48, 48[1], 77-80 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման որոշ հողամասեր տրամադրել կառուցապատման իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Համայնքային և պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 18* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ |

*Ս. Օվյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1*

*Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի*
*ավագանու 09.09.2025թ. N 115 - Ա որոշման*

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /տարեկան վարձավճարի % / | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | կառուցապատման տրամադրվող հողամաս | ք. Աշտարակ | 02-001-0265-0067 | 0,005հա | բնակ. | - | ընդհանուր օգտագործման | Տարեկան վճարը՝ 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ, 50 տարի ժամկետով | |
| 2 | կառուցապատման տրամադրվող հողամաս | ք. Աշտարակ | 02-001-0265-0114 | 0,00414հա | բնակ. | - | ընդհանուր օգտագործման | Տարեկան վճարը՝ 15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ, 50 տարի ժամկետով | |
| 3 | կառուցապատման տրամադրվող հողամաս | ք. Աշտարակ | 02-001-0087-0034 | 0,002հա | բնակ. | - | ընդհանուր օգտագործման | Տարեկան վճարը՝ 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ, 50 տարի ժամկետով | |
| 4 | կառուցապատման տրամադրվող հողամաս | ք. Աշտարակ | 02-001-0409-0033 | 0,1372հա | բնակ. | - | ընդհանուր օգտագործման | Տարեկան վճարը՝ 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ, 60 տարի ժամկետով | |
| 5 | կառուցապատման տրամադրվող հողամաս | գ. Սասունիկ | 02-095-0012-0105 | 0,00426հա | բնակ. | - | ընդհանուր օգտագործման | Տարեկան վճարը՝ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ, 50 տարի ժամկետով | |
| 6 | կառուցապատման տրամադրվող հողամաս | գ. Սասունիկ | 02-095-0012-0104 | 0,00456հա | բնակ. | - | ընդհանուր օգտագործման | Տարեկան վճարը՝ 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ, 50 տարի ժամկետով | |
| 7 | կառուցապատման տրամադրվող հողամաս | Գ. Օրգով | 02-114-0561-0002 | 0,02073հա | բնակ. | | ընդհանուր օգտագործման | Տարեկան վճարը՝ 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ, 60 տարի ժամկետով | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

**_Հավելված 2_**

_Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի_
_ավագանու 09.09.2025թ. N 115 - Ա որոշման_

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | վարձակալությամբ տրամադրվող հողամաս | գ. Բյուրական | 02-028-0251-0011 | 1,1678հա | գյուղ. | արոտավայր | - | Տարեկան վարձավճարը՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ, 10 տարի ժամկետով | |
| 2 | վարձակալությամբ տրամադրվող հողամաս | գ. Բյուրական | 02-028-0251-0012 | 0,59189հա | գյուղ. | արոտավայր | - | Տարեկան վարձավճարը՝ 60 000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ, 10 տարի ժամկետով | |
| 3 | վարձակալությամբ տրամադրվող հողամաս | գ. Ոհշի | 02-108-0232-0157 | 0,22444հա | գյուղ. | արոտավայր | - | Տարեկան վարձավճարը՝ 35 000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ, 25 տարի ժամկետով | |
| 4 | վարձակալությամբ տրամադրվող հողամաս | գ. Օհանավան | 02-112-0146-0143 | 0,671595հա | գյուղ. | 0,63526հա-արոտավայր<br>0,036335հա -վարելահող | - | Տարեկան վարձավճարը՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ, 25 տարի ժամկետով | |
| 5 | վարձակալությամբ տրամադրվող հողամաս | գ. Արտաշավան | 02-020-0101-0053-հց | 0,6395հա | գյուղ. | արոտավայր | - | Տարեկան վարձավճարը՝ 70 000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ, 25 տարի ժամկետով | |
| 6 | վարձակալությամբ տրամադրվող հողամաս | գ. Արագածոտն | 02-017-0167-0115 | 5,68741հա | գյուղ. | արոտավայր | - | Տարեկան վարձավճարը՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, 25 տարի ժամկետով | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | վարձակալությամբ տրամադրվող հողամաս | գ. Արագածոտն | 02-017-0167-0112 | 0,61045հա | գյուղ. | արոտավայր | - | Տարեկան վարձավճարը՝ 60 000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ, 25 տարի ժամկետով | |
| 8 | վարձակալությամբ տրամադրվող հողամաս | ք. Աշտարակ | 02-001-0806-0125 | 1,09907հա | գյուղ. | արոտավայր | - | Տարեկան վարձավճարը՝ 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ, 25 տարի ժամկետով | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*09-ը սեպտեմբերի 2025թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 53*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

***Ν 116 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի հոկտեմբերի 9-ը, ժամը 17:00-ին:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 18* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ |

*Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն